

Սուլթանըմ, հուզուերընտէ օլունսուն թէսքիէ: Եւ քանիցս անգամ ի հարցանելն Մաթոսին առ իս թէ Ե՞կն գիր ի հոգեւորտիրէն հարցանել զկեանս իմ, պատասխանեցի թէ Ի ծանուցանելն իմ զանցս քո, ստիպէ գրել զամենայն անվալ քո միշտ եւ զբարին խապար փութացուցանել, եւ ես յորդորիմ ի գրել. եւ նա աւսէր՝ Զաղօթսն խնդրեմ նորա:

ԺԲ. — Իսկ զալուստ տիեզերակալին ի Զաթալճա, առաքեալ պատգամս Հուսէյին աղայի հասանիլ անդ ընդ գաւառան եւ զսովորական զխաֆէթն մատուցանել, եւ զպատրաստեալ զաղջիկն առեալ կառօք եւ երիվարօք հասանէր անդ, զի ընկալեալ ետղ արշաւանաց ձիոյ իւր յօրինեսցէ, կամ ելից եւ մտից յարկս ուրոյն իւր զարգարեսցէ, կամ ցանկ ի պարս հարճից զնա պատուեսցէ, որպէս զսօրղուճի հումայունէ լայիգն յառաջագոյն իմ ազդեալ իցէ, կամ ի զբօսանս զբաղանացն ի սփոփանս իւր պատրաստեսցէ, կամ զօրիորդն Ռուզային երեւելի Տաճկաց կացուսցէ, կամ ընդ գեղեցկագունիցն պերճացելոց զնա յաւելորդեսցէ, կամ ընդ ձանձրութեան միւսոցն՝ դարձեալ եւ զնա զգուեսցէ, կամ զզանագանութեանցն հակեալ ստանալ եւ զչքնազն՝ զանձն յզփացուսցէ, կամ վասն ազգին ճոխութեան զի միշտ ընծայաբերք լիցին նմա ի ծագաստանէ, կամ զգուստր քեռեաց իւրոց ի մէջ ազգի իւրոյ զայն մեծարեսցէ, կամ ընդ ցրտին ճանապարհէ եկեալ՝ ընդ դօխիկ կուսին զանձն ջերմացուսցէ, կամ զհաշելոցն ձանձրացեալ բունից՝ զնոր իմն բոյն գտեալ՝ զընդդէմն այնմ խաղացուսցէ, կամ վասն բորբոքման ախտին հրոյ՝ զգեղիւն փափաքման զսիրտն զովացուսցէ, կամ ի շարժիլ սէվտային՝ զնոր իմն ախորժակ ստացեալ զիղձն լցուսցէ, եւ կամ թէ ի ժամանակի եթէ ծնցի զարու՝ ի կարգս թագուհեաց զնա պսակեսցէ, որպէս մեծն Խորենացին գերզն ա-